Ս. Փրկչի, տեսին զվիրաւորեալսն, զկողոպտումն վանաց՝ և զեկեղեցւոյն զմասն և զաւերեալ տեղիսն, զորս քանդեալ և կործանեալ էին աւազակքն, և դարձան 'ի տեղիս իւրեանց. ١٠٦٣ (1652)։

Յաւուրս սոյն այս Աստուածատուր Պատրիարքի՝ Գրիգոր եպիսկոպոս ոմն Երուսաղէմի՝ շրջեալ քարոզութեամբ յաշխարհն Եթովպիա մինչ 'ի Մուխա. եկն անդուստ 'ի Քոչին (Հնդկաստան) եւ քարոզութեամբ իւրով հաստատեաց զամենեսեան 'ի դաւանութիւնս Հայոց և Ասորւոց։ Ապա գրեաց առ մարզպանն Հայոց Մէհրուժան՝ որ նստէր յայնժամ 'ի Տիգրանակերտ. եւ նա առաքեաց 'ի Հնդիկս զեպիսկոպոս մի Ասորի երկու քոր եպիսկոպոսօք, որոց եկեալ 'ի Քոչին հովուեցին զեկեղեցին զամս 15։ Պատմ. Հին Հնդկաստանի. Գիրք Գ. Գլ. Է. (1652)։

Գաբրիէլ վարդապետ Եթովպացի, հոգեւոր տեսուչ կրօնաւորացն Հաբեշաց եղելոց յԵրուսաղէմ. հսկող և պահապան վանօրէից կալուածոց և բովանդակ սեփհականութեանց նոցին որ 'ի Ս. Տեղիս։ Ի վախճանիլ սորա 'ի սոյն ամի, Եթովպացի կրօնաւորք թողեալ զվանօրայս և զտեղիս իւրեանց 'ի ձեռս Հայոց՝ եւ զպահպանութիւն նոցին յանձն արարեալ Աստուածատուր Պատրիարքի. մեկնեցան յաշխարհն իւրեանց. և մնաց յԵրուսաղէմ միայն Մարիամ անուն կին մի կրօնաւոր։ Տեսեալ զայս ամենայն Տոսիթէոս Պատրիարքին Յունաց. եդ 'ի մտի զինիլ ընդդէմ Հայոց. զի ախտ ագահութեան եւ տենչանք տիրապետութեան գրգռէր զսիրտ նորին, որպէս արարեալ էին նախորդք իւր, Սէրվիացւոց և Վրաց. և սա եւս պատեհ առիթ համարեալ՝ բանս եդ ընդ ազգայինս իւր 'ի Կոստանդինուպօլիս. հանկոյց յինքն զդատաւորն եւ զմեծամեծս Երուսաղէմի երեւելի արօք և պարգեւօք, և գրաւեալ զամենայն տեղիս Հաբեշաց՝ տիրեաց բովանդակ սեփհականութեանց նոցին. յորմէ ծագեցաւ աղմուկ մեծ և խռովութիւն 'ի մէջ Հայոց և Յունաց յԵրուսաղէմ։

Իսկ Աստուածատուր Պատրիարք դեգերեալ 'ի դրունս այլազգեաց ջանայր թափել զնոսա 'ի ձեռաց Յունաց. զի Յոյնք տագնապէին զնա, թէ Հաբէշք հետեւող և համազգային իւրեանց իցեն. և Հայք զհակառակն պնդէին. եւ